ՀԱՌԱՋԱԲԱՆ

Զաքարյանց շրջանով սկսած արևելյան Հայաստանի քաղաքական և մտավոր վերածնունդը մի խոշոր յերևույթ եր մեր պատմության մեջ, վոր յուր դրոշմն ե դրել նաև հետագա դարերի արվեստի և քաղաքակրթության, մասամբ և քաղաքական կյանքի վրա այն չափով, վոր չափով վոր այդ շրջանում ծագած իշխանական տոհմերը շարունակում են ղեկավար հանդիսանալ և ապագայում։ Հեռմոնդոլական Հայաստանի վիճակը, վորքան և քաղաքականապես հեղհեղուկ և կուլտուրապես յենթակա իրար հաջորդող փոխազդեցությունների, մի ամբողջություն ե կազմում Զաքարյան և մոնդոլական շրջանների հետ, և հետզհետե միայն մեռնում, մինչև ԺԷ. ԺԸ. դարու մտավոր և քաղաքական վերածնության նոր փորձերը։

Ժամանակով համեմատաբար մեզ ավելի մոտ լինելով այդ մեծ շրջանը, բնականաբար և ավելի հարուստ ե յուր ստեղծագործական բազմատեսակ մնացորդներով՝ բանաստեղծության և յուրատեսակ գրականության հետ՝ նաև ճարտարապետական պեսպիսություններով և մանավանդ հազարավոր ձեռագիրներով, մանրանկարչական և մշակույթի բազմատեսակ արժեքների բովանդակությամբ, մանր արվեստի մնացորդներով. .., բայց տարաբախտաբար հենց այդ շրջանն ել իբրև ամբողջություն քիչ ե յենթարկված գիտական ուսումնասիրության այն հասկանալի պատճառով, վոր աղբյուրները ցրված են և վոչ բավարար չափով մատչելի բանասիրության, հավաքվածներն ել վոչ բավարար չափով ոգտագործված։ Բայց այդ վոչ միայն հնարավոր ե յերկարատև և կարգավորյալ աշխատանքով, այլ և կարելի կլինի անցյալի մի կենդանի և գեղեցիկ խճապատկեր ստանալ, յեթե բաղկացուցիչ մասերի գույնզգույն քարերը խնամով հավաքվին և հաջողությամբ դասավորվին իրենց տեղերում։ Հենց միայն հիշատակարանների և արձանագրությունների ժողովածուները վորչափ գնահատելի նյութ են մատակարարում այդ շրջանի բազմակողմանի և փաստացի լուսաբանության համար, վորի շատ կետերը մութ կմնային առանց դրանց։

Տասնյակ տարիներ հետամուտ հայ գրչության և մանրանկարչական արվեստների ուսումնասիրության, ինչպես և ճարտարապետական-շինարարական հուշարձանների, վորչափ նրանք ոժանդակ կարող են հանդիսանալ ընդհանուր գեղարվեստական հոսանքներն ու յերևույթները հասկանալու և լուսաբանելու, հաջողվել ե մեզ անբավ նյութ հավաքել այդ ուղղությամբ, ճշտությամբ արտագրելով կամ լուսանկարելով հազարավոր ձեռագիրներից հիշատակարաններ կամ պատմական հատվածներ, արձանագրություններ, շենքեր, քանդակներ, վոսկերչության, ասեղնագործության և ժողովրդական արվեստի արտադրություններ յերբեմն և գունաղարդ արտանկարություններով (aquarelle), վորոնք հնարավորություն են տալիս, մեզնից առաջ կատարված աշխատությունների հետ, ավելի մանրակրկիտ, իրական կամ փաստական տվյալների վրա հիմնել մեր ուսումնասիրությունը։

Զաքարյանց շրջանում ծագած հայ իշխանական տոհմերի պատմությունն իբրև ուղեգիծ և առանցք ընդունելով, մենագրական աշխատանքներով (monographie), կամենում ենք պարզել և արևելյան Հայաստանի ավելի քան հինգ հարյուր տարվա պատմությունը, քաղաքական և արտաքին կողմերից ավելի, շինարարական-կուլտուրական-գեղարվեստական ստեղծագործությունների պատկերը տալ յուր յելևեջներով, վոր ի վերջո պատմության եյությունն ե, անցավոր յերևույթների մեջ ավելի մնայունը։

«Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ» աշխատությունը այդ կարգի գործերից մեկն ե միայն. դրան պիտի հաջորդեն Որբելյան, Վաչուտյան, Խաչենոյ, Դոփյանց, Շա-